ապրում։ Ամէն քայլափոխի Լալա-Փաշայի աւերածներն են, արուեստի եւ դիտութեան այդ ոխերիմ թշնամու գործերը զայրոյթ են պատճառում։ Բնութեան այս դրախտի մէջ դարեր ու դարեր արհեստաւորն ու երկրագործը կեանքը զարգացրել, քաղցրացրել, հսկայական չէնքերով գեղեցկացրել են. իսկ տգիտութիւնն ու բռնակալութիւնը կործանել ու խոպանացրել են։

Թորդում վտակը ակունքից մինչեւ գաւառի ոստանն հասնելը աջ կողմից ընդունում է Կըզըլ-Լայա, Դումլու, Թենխա, Գասերիկ, Բաբաթ, Սալթմինէ, առ-ը. իսկ ձախից՝ Զավուրմա, Էյրի-չայիր, Զինակեր, Կուգվանց, Խոշպերեբ, Վախտիգանց, Խաշնուտ, Նորշէն, Միգոտ եւ Կեռուկ առ-ը, որոնք ոռոգում են համանուն գեղերը, նրանց ախոռները, մացրանները, եայլաները, ձմեռանոցները, բերդերն ու ամրոցները, վանքերն ու այրերը։ Այս բոլոր խրամատներն ու ձորերը, լեռնային լանջերն ու ստորոտները, ծածկուած են եղել ընտիր անտառներով, բայց անխնամ մնալով՝ այժմ միայն մացառներ ունին։ Ձորերում բնակութիւնների մօտ պարտէզներ եւ ընդարձակ ծառաստաններ շատ կան։

Թորդում գետը դէպի հիւսիս ընթանալով՝ աջից ընդունում է Կազարիս առ-ը որ բղխում է Կանդիլ լ-ից, Կարագեօզ լճակի